Ջեռուցման համակարգի աշխատանքային գծագրերի հիմնական լրակազմի ամփոփագիր

| Թերթ | Անվանում | Ծանոթագր. |
|---|---|---|
| 1 | Ընդհանուր տվյալներ | Ջ-1 |
| 2 | «1» մասնաշենքի առաջին հարկի ջեռուցման համակարգի հատակագիծ Մ 1:100 | Ջ-2 |
| 3 | «1» մասնաշենքի երկրորդ հարկի ջեռուցման համակարգի հատակագիծ Մ 1:100 | Ջ-3 |
| 4 | «2» և «3» մասնաշենքերի առաջին հարկի ջեռուցման համակարգի հատակագիծ Մ 1:100 | Ջ-3 |
| 5 | «2» և «3» մասնաշենքերի երկրորդ հարկի ջեռուցման համակարգի հատակագիծ Մ 1:100 | Ջ-5 |
| 6 | «1» մասնաշենքի առաջին հարկի ջեռուցման համակարգի սխեմա | Ջ-6 |
| 7 | «1» մասնաշենքի երկրորդ հարկի ջեռուցման համակարգի սխեմա | Ջ-7 |
| 8 | «2» և «3» մասնաշենքերի առաջին հարկի ջեռուցման համակարգի սխեմա | Ջ-8 |
| 9 | «2» և «3» մասնաշենքերի երկրորդ հարկի ջեռուցման համակարգի սխեմա | Ջ-9 |
| 10 | Ջեռուցման համակարգի մասնագիր | Ջ-10 |

Պայմանական նշաններ

| | |
|---|---|
| | Ջեռուցման մատակարարող խողովակագիծ |
| | Ջեռուցման հետադարձ խողովակագիծ |
| | Փական |
| | Դատարկման փական |
| d=20x2.8 | Խողովակի տրամագիծ |
| | Ջեռուցման տուրբո կաթսա |
| 50×80 | Ջեռուցման պողպատե պանելային մարտկոց 50սմ×80սմ չափերով (հատակագծում) |
| 50×80 | Ջեռուցման պողպատե պանելային մարտկոց կարգավորիչ փականով և օդահան կափույրով 50սմ ×80սմ չափերով (սխեմայում) |
| Կ.1 | Ջեռուցման կանգնակ № 1 |
| | Անցում հատակի նախաշերտի միջով |

Ընդհանուր ցուցումներ

Գյումրու «Արևիկ» մանկապարտեզի ջեռուցման համակարգի նախագիծն իրականացված է ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, նախագծման նորմերին և կանոններին (ՀՀՇՆ IV-12.02.01-04), ինչպես նաև նախագծային առաջադրանքին համապատասխան:

Նախագիծն իրականացված է ըստ արտաքին օդի հաշվարկային ջերմաստիճանի տարվա ցուրտ շրջանի համար $t_h$ = - 25°C:

Ջեռուցում

1. Մանկապարտեզի համար նախագծվում է փակուղային ջեռուցման համակարգ: Մայրուղային խողովակագծերն անց են կացվում առաջին և երկրորդ հարկերի հատակների վրայով:
2. Ջեռուցման ընդհանուր ծախսը կազմում է 94.5կՎտ (81270կկալ/ժամ):
3. Նախագծով նախատեսվում է ջերմային հանգույցում տեղադրել երեք տուրբո կաթսա՝ յուրաքանչյուրը 35կՎտ հզորությամբ:
4. Որպես ջերմատար ծառայում է 80-60°C ջերմաստիճանով տաք ջուրը:
5. Որպես ջեռուցման սարքեր ընդունված են պողպատե պանելային մարտկոցներ, որոնց համապատասխան կախիչները, պտուտակամեխերը, փակիչը և օդահան կափույրը ներառված են յորաքանչյուր կոմպլեկտում:
6. Ջեռուցման համակարգում բոլոր խողովակները նախատեսվում են պոլիպրոպիլենային:
7. Համակարգից օդի հեռացումն իրականացվում է ջեռուցման մարտկոցների վրա տեղադրված օդահան կափույրների միջոցով:
8. Որպես ելակետային ջուր օգտագործվում է խմելու ջուրը շենքի ներքին ջրամատակարարման ցանցից:
9. Ջրի հեռացումը համակարգից իրականացվում է դատարկման փականների միջոցով դեպի հոսակ:
10. Մայրուղային խողովակագծերը սյուների մոտ անց են կացվում ե/բ սյուները շրջանցելով:
11. Հատակի նախաշերտի միջով անցնող խողովակները ջերմամեկուսացվում են ռետինե ջերմամեկուսիչ խողովակներով:
12. Մայրուղային խողովակագծերը ծածկվում են փայտատաշեղային լամինացված սալերով:
13. Շահագործումից առաջ ջեռուցման համակարգը ենթարկվում է հիդրավլիկ փորձարկման:
14. Թողարկումից հետո կատարվում է ջեռուցման համակարգի կարգաբերում:

| Ծրագրի առաջադրանք՝ TSH-12 | Գյումրու «Արևիկ» մանկապարտեզի վերակառուցում | | |
|---|---|---|---|
| | Ջեռուցում | ՓՈՒԼ / ԱՆ | ԹԵՐԹ / Ջ-1 | ԹԵՐԹԵՐ / 10 |
| Նախագծ. / Ա. Թորոսյան / (ստորագրություն) | Ընդհանուր տվյալներ | INTER energia / ԻՆՏԵՐ էներգիա ՍՊԸ | | |
| Պաշտոն / Ազգանուն / Ստորագր. | | | | |